ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2022/64

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հունիսի 2022 թ. N 64

«ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝	«Գավառի պետական համալսարան» հիմնադրամ /ԳՊՀ/
Գործունեության հասցեն՝	ՀՀ, Գեղարքունիքի մարզ ք. Գավառ, Հրանտ Հակոբյանի 1, 1201
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝	**ինստիտուցիոնալ հավատարմագրում, 4 տարի ժամկետով՝ 15.06.2017թ.- 15.06.2021թ**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2021 թվականի հոկտեմբերի 22-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԳՊՀ, Համալսարան, բուհ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝	11 հունվարի 2021թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝	12 հուլիսի 2021թ.
փորձագիտական այցի իրականացում՝	20-23 նոյեմբեր 2021թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝	3 մարտի 2022թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում՝	11 ապրիլի 2022թ.

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից անբավարար է գնահատվել **«Հետազոտություն և զարգացում»** չափանիշը:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ԳՊՀ-ի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ԳՊՀ-ի ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

ԳՊՀ-ն 2017 թվականին ստացել է ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով և, հաշվի առնելով հավատարմագրման գործընթացի շրջանակում ստացված խորհրդատվությունները, կազմել է բարելավման գործողությունների ծրագիր: Համալսարանը մի շարք ոլորտներում իրականացրել է բարելավմանը միտված փոփոխություններ:

1. ***Համալսարանը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում***

Նախորդ հավատարմագրումից հետո ԳՊՀ-ն վերանայել է իր ՄԿԾ-ները, բարեփոխել է ՄԿԾ-ների մշակման և հաստատման քաղաքականությունը, ուսանողների հետազոտական կարողությունների և հմտությունների զարգացման նպատակով վերանայել է ավարտական աշխատանքների պատրաստման և պաշտպանության կարգը, մշակել և ներդրել է ընտրովի և ֆակուլտատիվ դասընթացների կարգեր: ՄԿԾ-ների մասնագրերում փորձ է կատարվել վերջնարդյունքներին համապատասպանեցնել գնահատման մեթոդները: Սակայն գործող կրթական ծրագրերի մասնագրերը, առարկայական ծրագրերը դեռևս որակավորումներին և կրթական աստիճաններին համապատասխան վերջնարդյունքների հստակեցման, տարանջատման կարիք ունեն: Ուսուցման, դասավանդման և գնահատման կիրառվող մեթոդները մեծամասամբ ուղղված են տեսական գիտելիքին, այլ ոչ թե հմտությանն ու կարողությանը:

Կրթական ծրագրերի մշտադիտարկման նպատակով ԳՊՀ-ում իրականացվում են ամբիոնային քննարկումներ և հարցումներ շահակիցների շրջանում:

ԳՊՀ-ն ապահովված է համապատասխան մասնագիտական որակներով օժտված պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով: Կրթական ծրագրերը հիմնականում սպասարկում են համապատասխան որակավորում, գիտական կոչում և աստիճան ունեցող դասախոսներ: ՊԴ կազմում ընդգրկված են նաև գործատուներ, այլ բուհերից հրավիրյալ դասախոսներ, ինչպես նաև բուհի շրջանավարտներ:

ԳՊՀ-ում ՊԴ կազմի պաշտոնի տեղակալումն իրականացվում է մրցույթային կարգով:

Հիմք ընդունելով նախորդ հավատարմագրման խորհրդտվությունները, բուհի բոլոր ՄԿԾ-ների մասնագրերում վերանայվել և ամրագրվել են դասախոսական կազմին ներկայացվող անձնային, մանկավարժական և մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները:

Նյութատեխնիկական հագեցվածությունը բարելավվել է միջազգային ծրագրերի դրամաշնորհների շնորհիվ: Վերանորոգվել և կահավորվել են համալսարանի մի շարք լսարաններ, լաբորատորիաները համալրվել են նոր տեխնիկայով:

2. *Կառավարման և որակի ապահովման համակարգերը հիմնականում աջակցում են որակավորումների շնորհման արժանահավատության բարելավմանը*

Առկա են համալսարանի ՌԾ-ի միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումներ, սակայն առանձին ստորաբաժանումների մակարդակի պլանավորումները փոխկապակցված չեն ՌԾ-ի հետ:

Առկա են մշտադիտարկման մեխանիզմներ իրենց ցուցիչներով, սակայն դրանք ոչ միշտ են չափելի: Հիմնականում գործում են իրավիճակային գնահատումները, որոնց միջոցով հնարավոր է դառնում որոշակի ռիսկեր չեզոքացնել:

Տվյալների հավաքագրման հիմնական մեխանիզմը հարցումներն են, սակայն համակարգված, կանոնավոր ուսումնասիրություն և արտաքին գործոնների ազդեցության գնահատում չի իրականացվում:

Բուհում ներդրվել է հաշվետվողականության բարելավված համակարգ՝ ներառելով բոլոր ստորաբաժանումներին: Հաշվետվությունները հիմնականում միտված են ձեռքբերումների ներկայացմանը:

Կառավարումն ու որակի ապահովման համակարգերը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ: Համալսարանի ղեկավարությունը կարևորում է որակի ապահովման համակարգը և դրա զարգացումը՝ տրամադրելով համապատասխան ռեսուրսներ, սակայն որակի ապահովման համակարգը դեռևս չի ընկալվում որպես խնդիրների և կարիքների վերհանման մեխանիզմ:

3. *Միջազգայնացումն ու հետազոտական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորորումների արժանահավատ շնորհմանը*:

Բուհի միջազգայնացմանն ուղղված քայլերը, արտաքին կապերը և շահակիցների հետ հետադարձ կապը զարգացման և առաջխաղացման հնարավորություն են ստեղծում բուհի համար՝ նպաստելով վարկանիշի բարձրացմանը: Բուհը ցանկանում է դառնալ գրավիչ միջավայր օտարերկրյա ուսանողների և դասավանդողների համար: Սակայն այս նպատակի իրագործման համար ևս կոնկրետ քայլերը և գործողությունները նկարագրված չեն:

Համալսարանի ՌԾ-ով նախատեսվում է հետազոտության ուղղությունների զարգացում և որպես գերակա ուղղություն սահմանված է կրթության և գիտահետազոտության ինտեգրումը: Հետազոտական, ստեղծագործական միջավայրի ձևավորման համար կան ստեղծված նախադրյալներ, սակայն շոշափելի արդյունքներ դեռևս առկա չեն և հետազոտական աշխատանքների խրախուսման, կարևորման և համապատասխան մարդկային և նյութական ռեսուրսների տրամադրման առումով հրատապ քայլեր պետք է արվեն:

Ուսանողները տեղեկացված չեն ամբիոնների գիտահետազոտական թեմաների վերաբերյալ և նրանց մի մասը գիտահետազոտական աշխատանքներում ընդգրկված չեն: Միևնույն ժամանակ, մի կողմից, ՌԾ-ով հատուկ կարևորություն հատկացնելով համալսարանի

գիտահետազոտական գործունեությանը, այդուհանդերձ բացակայում են որևէ փաստաթղթերով ամրագրված հետազոտական պլանների մշակման, կարճաժամկետ նպատակների, առանցքային ցուցանիշներին հասնելու ուղղությունների, ժամանակացույցի, նպատակներին հասնելու գործիքակազմի վերաբերյալ գործողությունների պլանները:

Համալսարանում առկա են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության մեխանիզմներ, նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցի հիման վրա կատարվել են որոշակի բարելավումներ, ուսանողները բավարարված են տրամադրվող կրթությունից, գործում են ուսանողների կարիքների վերհանման որոշ մեխանիզմներ և վարչական ու դասախոսական կազմը հասանելի է, համալսարանն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն կրթական միջավայրի բարելավման նպատակով:

ԳՊՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ, սակայն առկա չեն հաշվետվողականության գնահատման ցուցանիշներ և մեխանիզմներ: Չնայած այն հանգամանքին, որ համալսարանը գործում է թափանցիկության սկզբունքով՝ տրամադրված տեղեկատվությունը հիմնականում կրում է նկարագրական բնույթ, ներկայացվում են դրական իրադարձությունները և ձեռքբերումները:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:

5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիրը հիմնականում իրատեսական է և իրականացումը կբերի որակական բարելավումների, սակայն անհրաժեշտ է հստակ և չափելի դարձնել արդյունավետության գնահատման ցուցիչները:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Գավառի պետական համալսրան» հիմնադրամին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով կառավարման, մասնագիտության կրթական ծրագրերի, հետազոտության և որակի ներքին ապահովման ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:

3. **Հատուկ ուշադրություն դարձնել.**
   - առաքելության համապատասխանեցմանը պետության և մյուս շահակիցների կարիքներին,
   - կառավարման համակարգի, դրա առանձին օղակների և հատկացվող ռեսուրսների արդյունավետության գնահատման մեխանիզմների ներդրմանը և գնահատման արդյունքներին արձագանքմանը,
   - որակական և քանակական ցուցիչներ ունենալու անհրաժեշտությանը,
   - վերլուծությունների, հստակ քանակական և որակական տվյալների վրա հիմնված որոշումների կայացմանը և հաշվետվությունների իրականացմանը,
   - ՄԿԾ-ների բարելավմանը՝ հստակ տարբերակելով մագիստրոսի և բակալավրի կրթական ծրագրերի վերջնարդյունքները, ապահովելով դրանց տրամաբանական կապը և հնարավորինս հստակ ձևակերպելով ու չափելի դարձնելով,

- ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման կազմակերպմանը,
- բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը,
- գիտահետազոտական գործունեության պլանավորման և իրականացման համակարգված մոտեցման կիրառմանը՝ հստակեցնելով գործընթացների կառավարման համակարգը, հետազոտություններին աջակցության և ֆոնդահայթայթման գործընթացները,
- ուսումնառության և հետազոտության կապի ամրապնդմանը,
- համալսարանի կառավարման վրա որակի ապահովման համակարգի ազդեցության բարձրացմանը:

4. Կազմակերպել ԳՊՀ-ում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի ներքին աուդիտ արտաքին փորձագետների ներգրավմամբ:
5. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով Համալսարանի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ԳՊՀ-ի գործունեության արդյունավետությունը՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:
7. Որոշումն ուժի մեջ է մտնում հավատարմագրման պետական գրանցամատյանում գրանցվելու պահից:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2022 թ. հունիսի 14
ք.Երևան